ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/76

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 11.10.2021թ. ներկայացված (12.10.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/76 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Վերիտաս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Բողոքաբեր) 11.10.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ն բժշկական սարքերի գնման նպատակով 2021թ. հոկտեմբերի 4-ին ժամը 11:48-ին հրապարակել է «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Վերիտաս ՍՊԸ-ն նույն օրը ժամը 15:30-ին armeps համակարգի միջոցով ուղարկել է պարզաբանման հարցում (տես կից ծանուցումը armeps համակարգից՝ արտատպված էլեկտրոնային փոստից):

Հրավերի թիվ 1 չափաբաժնի (Նեյրոմիոգրաֆ EMG) տեխնիկական բնութագիրը խտրական է, ուղղորդված և չի համապատասխանում «Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին՝ «22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի»:

«Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՀ օրենքի 29 հոդվածի համաձայն՝

«Հոդված 29. Հրավերի պարզաբանումը և դրանում փոփոխություն կատարելը

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում»:

Փաստացի սույն բողոքի ներկայացման օրվա դրությամբ պատվիրատուն չի պատասխանել պարզաբանման հարցմանը:

Հրավերի թիվ 1 չափաբաժնի (Նեյրոմիոգրաֆ EMG) տեխնիկական բնութագիրը խտրական է և ուղղորդված, ինչի պատճառով նշված տեխնիկական բնութագրին համապատասխանում է ընդամենը մեկ արտադրող՝ չեխական Deymed ընկերության TruTrace EMG մոդելը:

Տեխնիկական բնութագրի ցուցանիշները նույնությամբ արտագրված են այդ ընկերության կայքի համապատասխան բաժնից (Technical Specification): Կայքի հղումը հետևյալն է՝ https://deymed.com/trutrace-emg :

Կայքից արտատպված հատվածները կցված են, որոնց միայն զուտ թվային ցուցանիշները համեմատելով պատվիրատուի բնութագրերի հետ պարզ է դառնում, թե որտեղից է վերցրել պատվիրատուն այն:

Մեր ընկերության կողմից կատարվել է շուկայում հայտնի արտադրողների տեխնիկական բնութագրերի համադրում պատվիրատուի կազմած թիվ 1 չափաբաժնի բնութագրի հետ, որի արդյունքում պարզվել է, որ պատվիրատուի հրապարակած մրցույթի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրերին ողջ աշխարհում համապատասխանում է

միայն մեկ արտադրող, որը ՀՀ-ում ունի ներկայացուցիչ: Կից արտադրողի պատասխանը՝ արտատպված էլեկտրոնային փոստից:

Մանրակրկիտ ուսումնասիրվել և հրավերի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրերի հետ համեմատվել են հետևյալ հայտնի արտադրողների ապրանքները Natus ընկերության Dantec մոդելը, Neurosoft ընկերության ԷՄԳ սարքերի բոլոր մոդելները, Медиком ընկերության բոլոր մոդելները, Cadwell Industries և EMS արտադրողների մոդելները, ընդ որում անհամապատասխանությունները ոչ թե մեկ երկուսն են, այլ մեկ տասնյակից ավել և ուղղակի անհնար է մասնակցել այս մրցույթին որևէ այլ արտադրողի սարքով, քանի որ միանշանակ հայտը մերժվելու է տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության հիմքով, ինչն էլ ցանկացել է ապահովել պատվիրատուն:

Փաստացի մրցույթը կրում է ձևական բնույթ, քանի որ որևէ մրցակցության մասին խոսք գնալ չի կարող:

Բացի այդ, նմանատիպ սարքերի շուկայական արժեքը տատանվում է 4 500 000-ից 5 000 000 ՀՀ դրամ, սակայն պատվիրատուն նախահաշվային գին է սահմանել 8 000 000 ՀՀ դրամ, ուստի հարց է նաև ծագում պետական միջոցների արդյունավետ ծախսման վերաբերյալ և կասկած է հարուցում մրցույթի օգտավետ իրականացումը:

Այսպիսով չեն պահպանվել «Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է՝

1. Չկայացած հայտարարել «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով մրցույթի թիվ 1 չափաբաժինը,
2. Պարտավորեցնել պատվիրատուին կամ նրա համապատասխան ստորաբաժանմանը համապատասխանեցնելու մրցույթի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի պահանջներին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.10.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.10.2021թ թիվ N 77 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 12.10.2021թ. գրության, հայտնում ենք Ձեզ, ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08 ծածկագրով գնանշման հարցման բժշկական սարքերի մրցույթը 07.10.2021թ. դրությամբ լուծարվել է՝ քանի որ հրավերի փաթեթում ի հայտ են եկել անճշտություններ «հրավերով պահանջվել է հայտի ապահովում): Հրավերի լուծարման պահին գնային առաջարկներ չեն եղել»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.10.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Համաձայն «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության՝ Հրավերի անճշտությունները շտկելու նպատակով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մրցույթը լուծարելու և մրցույթի փաթեթը վերանայելու վերաբերյալ:

3. Ընկերությունը ներկայացված բողոքով 1-ին կետով խնդրել է չկայացած հայտարարել «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով մրցույթի թիվ 1 չափաբաժինը:

4. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վերիտաս» ՍՊԸ-ի 11.10.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Այսպես, «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Համաձայն «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության՝ Հրավերի անճշտությունները շտկելու նպատակով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մրցույթը լուծարելու և մրցույթի փաթեթը վերանայելու վերաբերյալ:

Ընկերությունը ներկայացված բողոքով 1-ին կետով խնդրել է՝

1. Չկայացած հայտարարել «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով մրցույթի թիվ 1 չափաբաժինը,

2. Պարտավորեցնել պատվիրատուին կամ նրա համապատասխան ստորաբաժանմանը համապատասխանեցնելու մրցույթի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի պահանջներին:

Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.10.2021թ թիվ N 77 գրությամբ հայտնել է, որ ***<u>ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08 ծածկագրով գնանշման հարցման բժշկական սարքերի մրցույթը 07.10.2021թ. դրությամբ լուծարվել է</u>***՝ քանի որ հրավերի փաթեթում ի հայտ են եկել անճշտություններ «հրավերով պահանջվել է հայտի ապահովում): Հրավերի լուծարման պահին գնային առաջարկներ չեն եղել:

Հաշվի առնելով Պատվիրատուի գրությունը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությունը՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգը բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 11.10.2021թ., մինչև հայտերի բացումը հայտարարվել է չկայացած, հետևաբար՝ Ընկերության պահանջի 1-ին կետը, այն է՝ չկայացած հայտարարել «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով մրցույթի թիվ 1 չափաբաժինը, ժամանակավրեպ է:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված պահանջի 2-րդ կետին, ապա գտնում եմ, որ նոր ընթացակարգ հայտարարվելու դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավասու չէ սույն որոշմամբ, պարտավորցնել մեկ այլ ընթացակարգի շրջանակներում, մեկ այլ գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ, որոնք բխում են մեկ այլ՝ «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքի պահանջներից, մասնավորապես՝ պարատավորեցնել համապատասխանեցնելու մրցույթի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 11.10.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**